| 4261 | -Գրասենյակային նյութեր և հագուստ | 4261 | 5635,3 | 5635,3 | X | 3539,5 | 3539,5 | X | 62,8 | 62,8 | |
| 4264 | -Տրանսպորտային նյութեր | 4264 | 23000,0 | 23000,0 | X | 18017,9 | 18017,9 | X | 78,3 | 78,3 | |

| | | | | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| 4267 | -Կենցաղային և հանրային սննդի նյութեր | 4267 | 3950,0 | 3950,0 | X | 3297,4 | 3297,4 | X | 83,5 | 83,5 | |
| 4268 | -Հատուկ նպատակային այլ նյութեր | 4269 | 28433,4 | 28433,4 | X | 18553,3 | 18553,3 | X | 65,3 | 65,3 | |
| 4500 | 1.5 ԴՐԱՄԱՇՆՈՐՀՆԵՐ (տող4510+տող4520+տող4530+տող4540) | | 1194237,1 | 1194237,1 | X | 1093521,7 | 1093521,7 | X | 91,6 | 91,6 | |
| 4530 | ԸՆԹԱՑԻԿ ԴՐԱՄԱՇՆՈՐՀՆԵՐ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՏՎԱԾԻ ԱՅԼ ՄԱԿԱՐԴԱԿՆԵՐԻՆ (տող4531+տող4532+տող4533) | x | 1194237,1 | 1194237,1 | X | 1093521,7 | 1093521,7 | X | 91,6 | 91,6 | |
| 4531 | - Ընթացիկ դրամաշնորհներ պետական և համայնքների ոչ առևտրային կազմակերպություններին | 4637 | 1194237,1 | 1194237,1 | X | 1093521,7 | 1093521,7 | X | 91,6 | 91,6 | |
| 4600 | 1.6 ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ՆՊԱՍՏՆԵՐ ԵՎ ԿԵՆՍԱԹՈՇԱԿՆԵՐ (տող4610+տող4630+տող4640) | x | 78100,0 | 78100,0 | X | 65285,7 | 65285,7 | X | 83,6 | 83,6 | |
| 4630 | ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ՕԳՆՈՒԹՅԱՆ ԴՐԱՄԱԿԱՆ ԱՐՏԱՀԱՅՏՈՒԹՅԱՄԲ ՆՊԱՍՏՆԵՐ (ԲՅՈՒՋԵԻՑ) (տող4631+տող4632+տող4633+տող4634) | x | 78100,0 | 78100,0 | X | 65285,7 | 65285,7 | X | 83,6 | 83,6 | |
| 4631 | -Հուղարկավորության նպաստներ բյուջեից | 4726 | 1500,0 | 1500,0 | X | 200,0 | 200,0 | X | 13,3 | 13,3 | |
| 4634 | -Այլ նպաստներ բյուջեից | 4729 | 76600,0 | 76600,0 | X | 65085,7 | 65085,7 | X | 85,0 | 85,0 | |
| 4700 | 1.7 ԱՅԼ ԾԱԽՍԵՐ (տող4710+տող4720+տող4730+տող4740+տող4750+տող4760+տող4770) | x | 25643,8 | 501972,2 | 0,0 | 10752,0 | 487080,4 | 0,0 | 41,9 | 97,0 | |
| 4710 | ՆՎԻՐԱՏՎՈՒԹՅՈՒՆՆԵՐ ՈՉ ԿԱՌԱՎԱՐԱԿԱՆ (ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ) ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐԻՆ (տող4711+տող4712) | x | 7141,6 | 7141,6 | X | 4441,6 | 4441,6 | X | 62,2 | 62,2 | |
| 4712 | -Նվիրատվություններ այլ շահույթ չհետապնդող կազմակերպություններին | 4819 | 7141,6 | 7141,6 | X | 4441,6 | 4441,6 | X | 62,2 | 62,2 | |
| 4720 | ՀԱՐԿԵՐ, ՊԱՐՏԱԴԻՐ ՎՃԱՐՆԵՐ ԵՎ ՏՈՒՅԺԵՐ, ՈՐՈՆՔ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՏԱՐԲԵՐ ՄԱԿԱՐԴԱԿՆԵՐԻ ԿՈՂՄԻՑ ԿԻՐԱՌՎՈՒՄ ԵՆ ՄԻՄՅԱՆՑ ՆԿԱՏՄԱՄԲ | x | 8372,5 | 8372,5 | X | 5762,9 | 5762,9 | X | 68,8 | 68,8 | |
| 4723 | -Պարտադիր վճարներ | 4823 | 8372,5 | 8372,5 | X | 5762,9 | 5762,9 | X | 68,8 | 68,8 | |
| 4730 | ԴԱՏԱՐԱՆՆԵՐԻ ԿՈՂՄԻՑ ՆՇԱՆԱԿՎԱԾ ՏՈՒՅԺԵՐ ԵՎ ՏՈՒԳԱՆՔՆԵՐ (տող4731) | x | 547,5 | 547,5 | X | 547,5 | 547,5 | X | 100,0 | 100,0 | |
| 4731 | -Դատարանների կողմից նշանակված տույժեր և տուգանքներ | 4831 | 547,5 | 547,5 | X | 547,5 | 547,5 | X | 100,0 | 100,0 | |
| 4761 | -Այլ ծախսեր | 4861 | 0,0 | 0,0 | X | 0,0 | 0,0 | X | | | |
| 4770 | ՊԱՀՈՒՍՏԱՅԻՆ ՄԻՋՈՑՆԵՐ (տող4771) | x | 9582,2 | 485910,6 | 0,0 | 0,0 | 476328,4 | 0,0 | 0,0 | 98,0 | |
| 4771 | -Պահուստային միջոցներ | 4891 | 9582,2 | 485910,6 | 0,0 | 0,0 | 476328,4 | 0,0 | 0,0 | 98,0 | |

| | | | | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| 4772 | այդ թվում` համայնքի բյուջեի վարչական մասի պահուստային ֆոնդից ֆոնդային մաս կատարվող հատկացումներ | x | 476328,4 | 476328,4 | X | 476328,4 | 476328,4 | X | 100,0 | 100,0 | |
| 5000 | Բ. ՈՉ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԱԿՏԻՎՆԵՐԻ ԳԾՈՎ ԾԱԽՍԵՐ (տող5100+տող5200+տող5300+տող5400) | x | 3017923,3 | X | 3017923,3 | 1666791,6 | X | 1666791,6 | 55,2 | | 55,2 |
| 5100 | 1.1. ՀԻՄՆԱԿԱՆ ՄԻՋՈՑՆԵՐ (տող5110+տող5120+տող5130) | x | 3017923,3 | X | 3017923,3 | 1666791,6 | X | 1666791,6 | 55,2 | | 55,2 |
| 5110 | ՇԵՆՔԵՐ ԵՎ ՇԻՆՈՒԹՅՈՒՆՆԵՐ (տող5111+տող5112+տող5113) | x | 2853921,0 | X | 2853921,0 | 1583298,7 | X | 1583298,7 | 55,5 | | 55,5 |
| 5112 | - Շենքերի և շինությունների կառուցում | 5112 | 212000,0 | X | 212000,0 | 63357,9 | X | 63357,9 | 29,9 | | 29,9 |
| 5113 | - Շենքերի և շինությունների կապիտալ վերանորոգում | 5113 | 2641921,0 | X | 2641921,0 | 1519940,8 | X | 1519940,8 | 57,5 | | 57,5 |
| 5120 | ՄԵՔԵՆԱՆԵՐ ԵՎ ՍԱՐՔԱՎՈՐՈՒՄՆԵՐ (տող5121+ տող5122+տող5123) | x | 22700,0 | X | 22700,0 | 14905,7 | X | 14905,7 | 65,7 | | 65,7 |
| 5122 | - Վարչական սարքավորումներ | 5122 | 18500,0 | X | 18500,0 | 13153,6 | X | 13153,6 | 71,1 | | 71,1 |
| 5123 | - Այլ մեքենաներ և սարքավորումներ | 5129 | 4200,0 | X | 4200,0 | 1752,1 | X | 1752,1 | 41,7 | | 41,7 |
| 5130 | ԱՅԼ ՀԻՄՆԱԿԱՆ ՄԻՋՈՑՆԵՐ (տող 5131+տող 5132+տող 5133+ տող5134) | x | 141302,3 | X | 141302,3 | 68587,3 | X | 68587,3 | 48,5 | | 48,5 |
| 5131 | -Աճեցվող ակտիվներ | 5131 | 60000,0 | X | 60000,0 | 0,0 | X | 0,0 | 0,0 | | 0,0 |
| 5134 | - Նախագծահետազոտական ծախսեր | 5134 | 81302,3 | X | 81302,3 | 68587,3 | X | 68587,3 | 84,4 | | 84,4 |
| 6000 | Գ. ՈՉ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԱԿՏԻՎՆԵՐԻ ԻՐԱՑՈՒՄԻՑ ՄՈՒՏՔԵՐ (տող6100+տող6200+տող6300+տող6400) | x | 0,0 | X | 0,0 | -45113,5 | X | -45113,5 | | | |
| 6100 | ՀԻՄՆԱԿԱՆ ՄԻՋՈՑՆԵՐԻ ԻՐԱՑՈՒՄԻՑ ՄՈՒՏՔԵՐ (տող6110+տող6120+տող6130) | x | 0,0 | X | 0,0 | -8392,8 | X | -8392,8 | | | |
| 6130 | ԱՅԼ ՀԻՄՆԱԿԱՆ ՄԻՋՈՑՆԵՐԻ ԻՐԱՑՈՒՄԻՑ ՄՈՒՏՔԵՐ | 8131 | 0,0 | X | 0,0 | -8392,8 | X | -8392,8 | | | |
| 6400 | ՉԱՐՏԱԴՐՎԱԾ ԱԿՏԻՎՆԵՐԻ ԻՐԱՑՈՒՄԻՑ ՄՈՒՏՔԵՐ (տող6410+տող6420+տող6430+տող6440) | x | 0,0 | X | 0,0 | -36720,7 | X | -36720,7 | | | |
| 6410 | ՀՈՂԻ ԻՐԱՑՈՒՄԻՑ ՄՈՒՏՔԵՐ | 8411 | 0,0 | X | 0,0 | -36720,7 | X | -36720,7 | | | |

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ԴԱՎԻԹ ՂՈՒԿԱՍՅԱՆ

ՖԻՆԱՆՍԱՏՆՏԵՍԱԳԻՏԱԿԱՆ ԵՎ ԳՆՈՒՄՆԵՐԻ ԲԱԺՆԻ ՊԵՏ՝ ՍԱՄՎԵԼ ԹՈՐՈՍՅԱՆ

ՆԱԽԱԳԻԾ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ԱԼԱՎԵՐԴԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

# ՈՐՈՇՈՒՄ

25 փետրվարի 2025 թվական, N -Ն

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ԱԼԱՎԵՐԴԻ ՀԱՄԱՅՆՔԻ 2024 ԹՎԱԿԱՆԻ ՏԱՐԵԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ՊԼԱՆԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՏԱՐԵԿԱՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 4.1-րդ կետով ու 82.1-րդ հոդվածի 6-րդ մասով՝

համայնքի ավագանին ***որոշում է.***

1. Հաստատել Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Ալավերդի համայնքի 2024 թվականի տարեկան աշխատանքային պլանի իրականացման վերաբերյալ տարեկան հաշվետվությունը՝ համաձայն հավելվածի:
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման օրվանից:

Հավելված
ՀՀ Լոռու մարզի Ալավերդի համայնքի ավագանու
2025 թվականի -ի, N որոշման

**Ամփոփաթերթ**
Ալավերդի համայնքի 2024 թվականի տարեկան աշխատանքային պլանի իրականացման վերաբերյալ հաշվետվության

| Հ/Հ | Անվանում | Ծախս (ՀՀ դրամ) | | |
|---|---|---|---|---|
| | | Պլան | Փաստ | % |
| **1** | **Ընդհանուր բնագավառ** | | | |
| 1.1. | Համայնքապետարանի աշխատակազմի պահպանում, համայնքային ծառայությունների արդյունավետ, թափանցիկ կառավարում, ենթակառուցվածքների գործունեության պահպանում | 557 329 368 | 437 522 825 | 79 |
| 1.2. | Ալավերդի համայնքի բնակավայրի վարչական նստավայրի շենքերի վերանորոգում | 46 934 300 | 9 559 175 | 20 |
| **2** | **Քաղաքաշինության և կոմունալ տնտեսության բնագավառ** | | | |
| 2.1. | Ալավերդի համայնքի բազմաբնակարան շենքերի տանիքների վերանորոգում և շենքերի մասնակի ջերմամեկուսացում | 371 279 448 | 446 772 834 | 120 |
| 2.2. | Ալավերդի համայնքի փողոցային լուսավորության համակարգի կառուցում և գոյություն ունեցող լուսատուների արդիականացում | 219 826 961 | 9 749 066 | 4 |
| 2.3. | Խմելու ջրամատակարարման ցանցերի վերանորոգում և սպասարկում | 82 254 000 | 76 968 226 | 94 |
| **3** | **Տրանսպորտի բնագավառ** | | | |
| 3.1. | Ալավերդի համայնքի ճանապարհների կապիտալ վերանորոգում՝ տուֆ քարով սալարկմամբ | 311 891 687 | 203 131 248 | 65 |
| 3.2. | Ալավերդի համայնքի ճանապարհների կապիտալ վերանորոգում՝ ասֆալտապատմամբ | 956 646 213 | 375 891 280 | 39 |
| **4** | **Կրթության, մշակույթի և երիտասարդության հետ տարվող աշխատանքների բնագավառ** | | | |
| 4.1. | Գրադարանային ծառայություններ և մշակութային կյանքի կազմակերպում համայնքում | 122 405 500 | 124 510 563 | 102 |
| 4.2. | Մշակույթի տների վերանորոգում | 141 721 800 | 122 794 013 | 87 |
| 4.3. | Նախադպրոցական կրթության ծառայության մատուցում | 525 309 600 | 441 846 077 | 84 |
| 4.4. | Արտադպրոցական դաստիարակության ծառայության մատուցում | 268 741 000 | 234 051 040 | 87 |
| 4.5. | Ալավերդի համայնքի թիվ 4 մանկապարտեզի մեկ մասնաշենքի և բակի վերանորոգում՝ շենքի ջերմամեկուսացմամբ ու Կաճաճկուտ գյուղի նախակրթարանի վերանորոգում | 168 881 760 | 0 | 0 |
| 4.6. | Ալավերդի համայնքի թիվ 6 մանկապարտեզի շենքի վերանորոգում՝ ջերմաարդիականացմամբ | 281 981 610 | 175 449 784 | 62 |
| 4.7. | Ալավերդի համայնքի Արջուտի գյուղական բնակավայրի թիվ 8 մանկապարտեզում նոր խումբ բացելու նպատակով մանկապարտեզի վերանորոգում և կահավորում | 10 603 000 | 8 889 140 | 84 |
| 4.8. | Պետական բարձրագույն և /կամ/ միջնակարգ մասնագիտական ուսումնական հաստատություններում, ոչ պետական ուսումնական հաստատություններում /պետական հավատարմագրում ունեցող մասնագիտությունների գծով/ սովորող համայնքի սոցիալապես անապահով բնակիչների ուսանողների ուսման վարձի մասնակի հատկացում | 4 000 000 | 1 395 000 | 35 |
| 4.9. | Համայնքի հանրակրթական դպրոցների գործունեության աջակցում | 4 220 000 | 4 220 000 | 100 |
| **5** | **Առողջապահության, ֆիզիկական կուլտուրայի և սպորտի բնագավառ** | | | |
| 5.1. | Բժշկական ամբուլատորիաներում բժշկական ծառայությունների տրամադրում | 1 980 000 | 4 020 000 | 203 |
| 5.2. | Ճոճկան բնակավայրի «Բժշկական ամբուլատորիա» ՀՈԱԿ-ի շենքի հիմնանորոգում | 22 117 000 | 9 426 000 | 43 |

| | | | | |
|---|---|---|---|---|
| 5.5. | Ալավերդի համայնքում այգիների, խաղահրապարակների, մարզահրապարակների և տաղավարների կառուցում | 94 608 240 | 44 917 674 | 47 |
| 6. | Սոցիալական պաշտպանության բնագավառ | | | |
| 6.1. | Սոցիալական աջակցություն անապահով բնակիչներին | 6 000 000 | 1 670 000 | 28 |
| 6.2. | Սոցիալական աջակցություն հարազատներին կորցրած անձանց | 1 500 000 | 200 000 | 13 |
| 6.3. | Աջակցություն «ԱՌԱՔԵԼՈՒԹՅՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆ» բարեգործական ՀԿ-ի կողմից կազմակերպված բարեգործական ճաշարանին | 2 500 000 | 0 | 0 |
| 6.4. | Երեխաների ծննդյան կապակցությամբ մայրերին դրամական օգնություն | 5 000 000 | 2 560 000 | 51 |
| 7 | Անասնաբուժության և բուսասանիտարիայի բնագավառ | | | |
| 7.1. | Անասնաբուժական ծառայություն | 5 203 968 | 5 314 340 | 102 |
| 8 | Շրջակա միջավայրի պահպանության բնագավառ | | | |
| 8.1. | Աղբահանության, սանիտարական մաքրման, ճանապարհային, կենսաբազմազանության և բնության պաշտպանության ծառայությունների մատուցում | 398 556 000 | 289 450 480 | 73 |
| 8.2. | Ալավերդի համայնքում 500 կՎտ դրվածքային հզորությամբ համայնքային առևտրային արևային կայանի կառուցում | 206 339 754 | 63 357 900 | 31 |
| 9 | Գյուղատնտեսության բնագավառ | | | |
| 9.1. | Համայնքային գյուղատնտեսական տեխնիկայով մատուցվող ծառայություններ | 25 852 000 | 24 021 178 | 93 |
| 9.2. | Պտղատու այգիներ հիմնում | 60 000 000 | 0 | 0 |
| 9.3. | Ալավերդի համայնքի գյուղական բնակավայրերի ոռոգման և խմելու ջրամատակարարման ցանցերի վերանորոգում | 42 537 500 | 24 979 801 | 59 |
| 10 | Պաշտպանության կազմակերպման բնագավառ | | | |
| 10.1. | Քաղաքացիական պաշտպանություն | 12 300 000 | 6 595 629 | 54 |
| 11 | Զբոսաշրջության բնագավառ | | | |
| 11.1. | Մինչյան եղբայրների թանգարանի գործունեություն և պահպանում | 3 045 000 | 1 911 712 | 63 |
| | Ընդամենը | 4 961 565 708 | 3 151 174 984 | |

Ալավերդի համայնքի ղեկավար Դավիթ Ղումաշյան

ՆԱԽԱԳԻԾ

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
# ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ԱԼԱՎԵՐԴԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

## ՈՐՈՇՈՒՄ

**25 փետրվարի 2025 թվական, N -Լ**

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ԱԼԱՎԵՐԴԻ ՀԱՄԱՅՆՔՈՒՄ ՀԱՆՐԱՅԻՆ ՀԱՎԱՔՆԵՐԻ ՄԱՍԻՆ ԻՐԱԶԵԿՈՒՄՆԵՐԻ ԳՐԱՆՑԱՄԱՏՅԱՆԻ ՎԱՐՄԱՆ ԿԱՐԳԸ ԵՎ ՁԵՎԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 42-րդ կետի և 36-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետի դրույթներով, «Հավաքների ազատության մասին» օրենքի 15-րդ հոդվածի պահանջներով՝

համայնքի ավագանին ***որոշում է.***

1. Հաստատել՝
   1) ՀՀ Լոռու մարզի Ալավերդի համայնքում հանրային հավաքների մասին իրազեկումների գրանցամատյանի վարման կարգը՝ համաձայն N 1 հավելվածի:
   2) ՀՀ Լոռու մարզի Ալավերդի համայնքում հանրային հավաքների մասին իրազեկումների գրանցամատյանի ձևը՝ համաձայն N 2 հավելվածի:
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում հրապարակման հաջորդ օրվանից:

*Օրինակելի ձև*

Հավելված N 1
Ալավերդի համայնքի ավագանու
« 25 » փետրվարի 2025 թվականի
N -- - Լ որոշման

# Կ Ա Ր Գ
# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ԱԼԱՎԵՐԴԻ ՀԱՄԱՅՆՔՈՒՄ ՀԱՆՐԱՅԻՆ ՀԱՎԱՔՆԵՐԻ ԱՆՑԿԱՑՄԱՆ ԻՐԱԶԵԿՈՒՄՆԵՐԻ ԳՐԱՆՑԱՄԱՏՅԱՆԻ ՎԱՐՄԱՆ

1. Սույն կարգով կարգավորվում են Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Ալավերդի համայնքում հանրային հավաքներ անցկացնելու իրազեկումների գրանցամատյանի **(այսուհետ՝ գրանցամատյան)** վարման հետ կապված հարաբերությունները:
2. Գրանցամատյանը համայնքի վարչական տարածքում հավաքներ անցկացնելու վերաբերյալ «Հավաքների ազատության մասին» օրենքով սահմանված կարգով Հայաստա նի Հանրապետության Լոռու մարզի Ալավերդի համայնքի ղեկավարին (այսուհետ՝ լիազոր մարմին) ներկայացրած գրանցված իրազեկումների վերաբերյալ և լիազոր մարմնի կամ նրա լիազորած անձի կողմից ձեռնարկված քայլերի մասին տեղեկությունների ամբողջականությունն է:
3. Գրանցամատյանը խիստ հաշվառման հատուկ մատյան է, տպագրվում է մեկ օրինակից, վարվում է թղթային տարբերակով:
4. Գրանցամատյանի պահպանումը և վարման պարտականություններ իրականացվում է լիազոր մարմնի կողմից լիազորած անձի պատասխանատվությամբ և այն պետք է սահմանված լինի համապատասխան իրավական ակտով (որոշում, կարգադրություն):
5. Գրանցամատյանը կարում, էջերը հերթական համարակալմամբ համարակալում, վերջին էջում էջերի քանակը՝ տառերով և թվով, այն կազմելու օրը, ամիսը, տարին նշում և ստորագրությամբ և կնիքով վավերացնում է՝ համայնքի աշխատակազմի քարտուղարը:
6. Հանրային հավաքներ անցկացնելու մասին լիազոր մարմնին ներկայացված իրազեկումները անհապաղ գրանցվում են գրանցամատյանում՝ ըստ դրանք ստանալու հերթականության: Մուտքագրման համարը գրառվում է նաև ներկայացված իրազեկման փաստաթղթի վրա: Յուրաքանչյուր տարվա գրանցումների համարակալումը կատարվում են տարեսկզբից: Յուրաքանչյուր օրացուցային տարվա համար համարակալումը սկսվում է 1-ից:
7. Գրանցամատյանը ըստ սյունակների լրացվում է հետևյալ ձևով՝
   1) 1-ին սյունակում թվերով գրառվում է իրազեկման մուտքագրման հերթական համարը.
   2) 2-րդ սյունակում գրառվում է հավաքի անցկացման մասին իրազեկումը լիազոր մարմնի աշխատակազմում մուտքագրելու օրը, ամիսը, տարեթիվը, ժամը.
   3) 3-րդ սյունակում գրառվում է իրազեկման ներկայացման ձևը՝ գրավոր՝ անձամբ կամ փոստով.
   4) 4-րդ սյունակում գրառվում է հավաքի կազմակերպչի (կազմակերպիչների) և ղեկավարի տվյալները՝ անձնագրի կամ անձը հաստատող այլ փաստաթղթի տվյալները, հեռախոսահամարները, փոստային և էլեկտրոնային հասցեները.
   5) 5-րդ սյունակում գրառվում է հավաքի տեսակը՝ հավաք կամ երթ կամ հավաք և երթ.
   6) 6-րդ սյունակում գրառվում է հավաքի վայրը.
   7) 7-րդ սյունակում գրառվում է հավաքի, սկզբի և ավարտի մոտավոր ժամանակը.

8) 8-րդ սյունակում գրառվում է հավաքի նպատակը.
9) 9-րդ սյունակում գրառվում է մասնակիցների սպասվող թիվը.
10) 10-րդ սյունակում գրառվում է երթի ուղին և ժամանակացույցը, եթե նախատեսված է երթի անցկացում, այլապես անհրաժեշտ է կատարել գծանշում.
11) 11-րդ սյունակում գրառվում են՝ հավաքի անցկացման ժամանակ օգտագործվելիք առարկաների կամ տեխնիկական միջոցների (պաստառներ, ջահեր, բարձրախոսներ և այլն), կարգադրիչների նախատեսվող թվի, վարձակալությամբ տրված տարածքներում վարձակալի համաձայնության, իրավաբանական անձի կողմից հավաք կազմակերպվելու դեպքում՝ իրավաբանական անձի ղեկավար մարմնի կամ կառավարման մարմնի որոշման վերաբերյալ և այլ տեղեկությունները.
12) 12-րդ սյունակում գրառվում է ներկայացված իրազեկման պատճենը լիազոր մարմնի նստավայրում բոլորի համար մատչելի ու տեսանելի տեղում փակցնելու օրը, ամիսը, տարեթիվը, ժամը.
13) 13-րդ սյունակում գրառվում է ներկայացված իրազեկման պատճենը համայնքի համացանցային կայքէջում տեղադրելու օրը, ամիսը, տարեթիվը.
14) 14-րդ սյունակում գրառվում է լիազոր մարմնի կողմից հավաքի անցկացման վերաբերյալ կարծիք ստանալու նպատակով ՀՀ ոստիկանությանը ուղարկված իրազեկման գրության համարը, օրը, ամիսը, տարեթիվը, ժամը.
15) 15-րդ սյունակում գրառվում է լիազոր մարմնի կողմից հավաքի անցկացման վերաբերյալ կարծիք ստանալու նպատակով ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարությանը ուղարկված իրազեկման գրության համարը, օրը, ամիսը, տարեթիվը, ժամը, եթե նախատեսված է հավաքը անցկացնել պատմության և մշակույթի անշարժ հուշարձանների, թանգարանների ու գրադարանների տարածքում կամ դրանց անմիջական հարևանությամբ նախատեսված վայրում, այլապես անհրաժեշտ է սյունակում կատարել գծանշում.
16) 16-րդ սյունակում գրառվում է հավաքի անցկացման վերաբերյալ ՀՀ ոստիկանությունից ստացված կարծիքը, գրության համարը, օրը, ամիսը, տարեթիվը, ժամը.
17) 17-րդ սյունակում գրառվում է հավաքի անցկացման վերաբերյալ ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարությունից ստացված կարծիքը, գրության համարը, օրը, ամիսը, տարեթիվը, ժամը, եթե լիազոր մարմինը հավաքի անցկացման վերաբերյալ կարծիք ստանալու նպատակով դիմել է ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարությանը, այլապես անհրաժեշտ է սյունակում կատարել գծանշում.
18) 18-րդ սյունակում գրառվում է լիազոր մարմնի կողմից իրազեկման քննարկման օրը, ամիսը, տարեթիվը.
19) 19-րդ սյունակում գրառվում է լիազոր մարմնի կողմից հավաքի անցկացման վերաբերյալ լսումներ անցկացնելու օրը, ամիսը, տարեթիվը.
20) 20-րդ սյունակում գրառվում է հավաք անցկացնելու մասին լիազոր մարմնի կողմից իրազեկման վերաբերյալ ընդունված որոշման համարը, օրը, ամիսը, տարեթիվը, բովանդակությունը.
21) 21-րդ սյունակում գրառվում է լիազոր մարմնի կողմից իրազեկման վերաբերյալ ընդունված որոշման մասին հավաքի կազմակերպիչներին տեղեկացնելու օրը, ամիսը, տարեթիվը.
22) 22-րդ սյունակում գրառվում է լիազոր մարմնի կողմից իրազեկման վերաբերյալ ընդունված որոշումը հավաքի կազմակերպիչներին հանձնելու ձևը (պատվիրված

փոստով՝ ստանալու մասին ծանուցմամբ կամ կազմակերպչին՝ առձեռն հանձնելու միջոցով), օրը, ամիսը, տարեթիվը.

23) 23-րդ սյունակում գրառվում է լիազոր մարմնի կողմից իրազեկման վերաբերյալ ընդունված որոշման մասին ՀՀ ոստիկանությանը տեղեկացնելու օրը, ամիսը, տարեթիվը, ժամը.

24) 24-րդ սյունակում գրառվում է լիազոր մարմնի կողմից իրազեկման վերաբերյալ ընդունված որոշման մասին գրությունը լիազոր մարմնի նստավայրում բոլորի համար մատչելի ու տեսանելի տեղում փակցնելու օրը, ամիսը, տարեթիվը.

25) 25-րդ սյունակում գրառվում է լիազոր մարմնի կողմից իրազեկման վերաբերյալ ընդունված որոշումը համայնքի համացանցային կայքէջում տեղադրելու օրը, ամիսը, տարեթիվը.

26) 26-րդ սյունակում գրառվում է այո կամ ոչ՝ լիազոր մարմնի կողմից իրազեկման վերաբերյալ ընդունված որոշումը դատական կարգով բողոքարկելու մասին.

27) 27-րդ սյունակում գրառվում է դատարանի վճռի համարը, օրը, ամիսը, տարեթիվը, հակիրճ բովանդակությունը, եթե լիազոր մարմնի կողմից իրազեկման վերաբերյալ ընդունված որոշումը դատական կարգով բողոքարկվել է, այլապես անհրաժեշտ է սյունակում կատարել գծանշում:

*Օրինակելի ձև*

Հավելված N 2
Ալավերդի համայնքի ավագանու
« 25 » փետրվարի 2025 թվականի
N -- - Լ որոշման

# ՀԱՄԱՅՆՔՈՒՄ ՀԱՆՐԱՅԻՆ ՀԱՎԱՔՆԵՐԻ ՄԱՍԻՆ ԻՐԱԶԵԿՈՒՄՆԵՐԻ ԳՐԱՆՑԱՄԱՏՅԱՆԻ ՁԵՎ

ՍԿՍՎԱԾ Է՝ ____________________
(օրը, ամիսը, տարին)

ԱՎԱՐՏՎԱԾ Է՝ ____________________
(օրը, ամիսը, տարին)

| Հավաքի անցկացման ներկայացված իրազեկման և հավաքի վերաբերյալ տեղեկություններ | | | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| N Հ/հ | Հավաքի անցկացման մասին իրազեկումը լիազոր մարմնի աշխատակազմում մուտքագրելու օրը, ամիսը, տարեթիվը, ժամը | Իրազեկումը ներկայացնելու ձևը | Հավաքի կազմակերպչի (կազմակերպիչների) և ղեկավարի տվյալները | Հավաքի տեսակը | Հավաքի վայրը | Հավաքի սկզբի և ավարտի մոտավոր ժամանակը | Հավաքի նպատակը | Մասնակիցների սպասվող թիվը | Երթի ուղին և ժամանակացույցը | Լրացուցիչ տեղեկություններ |
| 1 | 2 | 3 | 4 | 5 | 6 | 7 | 8 | 9 | 10 | 11 |
| 2 | | | | | | | | | | |
| 3 | | | | | | | | | | |
| 4 | | | | | | | | | | |
| 5 | | | | | | | | | | |

| Հավաքի անցկացման մասին հանրությանը տեղեկացնելու և պետական մարմիններից հավաքի անցկացման վերաբերյալ ստացված կարծիքների մասին տեղեկություններ | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|
| Ներկայացված իրազեկման պատճենը լիազոր մարմնի նստավայրում բոլորի համար մատչելի ու տեսանելի տեղում փակցնելու օրը, ամիսը, տարեթիվը, ժամը | Ներկայացված իրազեկման պատճենը համայնքի համացանցային կայքէջում տեղադրելու օրը, ամիսը, տարեթիվը | Լիազոր մարմնի կողմից հավաքի անցկացման վերաբերյալ կարծիք ստանալու նպատակով ՀՀ ոստիկանությանը ուղարկված իրազեկման գրության համարը, օրը, ամիսը, տարեթիվը, ժամը | Լիազոր մարմնի կողմից հավաքի անցկացման վերաբերյալ կարծիք ստանալու նպատակով ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարությանը ուղարկված իրազեկման գրության համարը, օրը, ամիսը, տարեթիվը, ժամը | Հավաքի անցկացման վերաբերյալ ՀՀ ոստիկանությունից ստացված կարծիքը, գրության համարը, օրը, ամիսը, տարեթիվը, ժամը | Հավաքի անցկացման վերաբերյալ ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարությունից ստացված կարծիքը, գրության համարը, օրը, ամիսը, տարեթիվը, ժամը | Լիազոր մարմնի կողմից իրազեկման քննարկման օրը, ամիսը, տարեթիվը | Լիազոր մարմնի կողմից հավաքի անցկացման վերաբերյալ լսումներ անցկացնելու օրը, ամիսը, տարեթիվը |
| 12 | 13 | 14 | 15 | 16 | 17 | 18 | 19 |
| | | | | | | | |
| | | | | | | | |
| | | | | | | | |
| | | | | | | | |
| | | | | | | | |

| Հավաք անցկացնելու մասին լիազոր մարմնի կողմից իրազեկման վերաբերյալ ընդունված որոշման վերաբերյալ տեղեկություններ | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|
| Հավաք անցկացնելու մասին լիազոր մարմնի կողմից իրազեկման վերաբերյալ ընդունված որոշման համարը, օրը, ամիսը, տարեթիվը, բովանդակությունը | Լիազոր մարմնի կողմից իրազեկման վերաբերյալ ընդունված որոշման մասին հավաքի կազմակերպիչներին տեղեկացնելու օրը, ամիսը, տարեթիվը | Լիազոր մարմնի կողմից իրազեկման վերաբերյալ ընդունված որոշումը հավաքի կազմակերպիչներին հանձնելու ձևը, օրը, ամիսը, տարեթիվը | Լիազոր մարմնի կողմից իրազեկման վերաբերյալ ընդունված որոշման մասին ՀՀ ոստիկանությանը տեղեկացնելու օրը, ամիսը, տարեթիվը, ժամը | Լիազոր մարմնի կողմից իրազեկման վերաբերյալ ընդունված որոշման մասին գրությունը լիազոր մարմնի նստավայրում բոլորի համար մատչելի ու տեսանելի տեղում փակցնելու օրը, ամիսը, տարեթիվը | Լիազոր մարմնի կողմից իրազեկման վերաբերյալ ընդունված որոշումը համայնքի համացանցային կայքէջում տեղադրելու օրը, ամիսը, տարեթիվը | Լիազոր մարմնի կողմից իրազեկման վերաբերյալ ընդունված որոշումը բողոքարկվե՞լ է դատական կարգով | Դատարանի վճռի համարը, օրը, ամիսը, տարեթիվը, հակիրճ բովանդակությունը |
| 20 | 21 | 22 | 23 | 24 | 25 | 26 | 27 |
| | | | | | | | |
| | | | | | | | |
| | | | | | | | |
| | | | | | | | |
| | | | | | | | |

Գրանցամատյանը կարված է, բաղկացած է՝ ______ ______________ էջից:
(թվով) (տառերով)

Գրանցամատյանը կազմվել է՝ ______________:
(օրը, ամիսը, տարին)

Համայնքի աշխատակազմի

քարտուղար՝ ______________ ______________
(ստորագրություն) (անուն, ազգանուն)

Կ.Տ

ՏԵՂԵԿԱՆՔ - ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄ

«ՀԱՄԱՅՆՔՈՒՄ ՀԱՆՐԱՅԻՆ ՀԱՎԱՔՆԵՐ ԱՆՑԿԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ ԻՐԱԶԵԿՈՒՄՆԵՐԻ ԳՐԱՆՑԱՄԱՏՅԱՆԻ ՎԱՐՄԱՆ ԿԱՐԳԸ ԵՎ ՁԵՎԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ---------------- ՀԱՄԱՅՆՔԻ ՈՐՈՇՄԱՆ ՆԱԽԱԳԾԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԱՆՀՐԱԺԵՇՏՈՒԹՅԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

------------------ համայնքի ավագանու քննարկմանը ներկայացվող «Համայնքում հանրային հավաքների մասին իրազեկումների գրանցամատյանի վարման կարգը և ձևը հաստատելու մասին» որոշման նախագիծը մշակվել է «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 42-րդ կետի և 36-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետի, «Հավաքների ազատության մասին» օրենքի 15-րդ հոդվածի պահանջների կարգավորումների համատեքստում:

**Իրավական ակտի ընդունման նպատակը և կարգավորման անհրաժեշտությունը.**

«Հավաքների ազատության մասին» օրենքի 15-րդ հոդվածով սահմանված է, որ հանրային հավաքներ անցկացնելու մասին իրազեկումների գրանցամատյանի վարման կարգն ու ձևը հաստատում է համայնքի ավագանին՝ նպատակ հետապնդելով կանոնակարգել հանրային հավաքների մասին իրազեկումների թափանցիկությունն ու հավաստիությունը:
Ելնելով վերոգրյալից համայնքի ավագանու քննարկմանն է ներկայացվում «Համայնքում հանրային հավաքներ անցկացնելու մասին իրազեկումների գրանցամատյանի վարման կարգը և ձևը հաստատելու մասին» ավագանու որոշման նախագիծը:

**Իրավական ակտի ընդունման կապակցությամբ այլ իրավական ակտերի ընդունման անհրաժեշտության մասին.**

Ավագանու որոշման նախագծի ընդունումն այլ իրավական ակտերի ընդունման կամ փոփոխություններ կատարելու անհրաժեշտություն չի առաջացնում:

**Իրավական ակտի ընդունման կապակցությամբ բյուջեում եկամուտների և ծախսերի ավելացման կամ նվազեցման մասին.**

Ավագանու որոշման նախագծի ընդունման կապակցությամբ համայնքի բյուջեում ծախսերի և եկամուտների էական ավելացում կամ նվազեցում չի նախատեսվում:

**Նախագծով առաջարկվող կարգավորումների բնույթն ու նպատակը.**

Նախագիծը կրում է ներքին (լոկալ) բնույթ, քանի որ պարունակում է վարքագծի կանոն այն անձանց խմբի համար, որոնք ակտն ընդունող մարմնի հետ աշխատանքային հարաբերությունների մեջ են կամ օգտվում են դա ընդունող մարմնի ծառայություններից կամ աշխատանքներից, և ուղղված է համայնքում հանրային հավաքների մասին իրազեկումների գրանցամատյանի վարման կարգը հաստատելուն: Կարգի ընդունումը նպատակ է հետապնդում համայնքի աշխատակազմի մակարդակում կարգավորելու հանրային հավաքների մասին իրազեկումների հուսալի և ապահով շրջանառությունը:

**Իրավական ակտի կիրառման դեպքում ակնկալվող արդյունքը.**

Նախագծի ընդունման արդյունքում ակնկալվում է գործող օրենսդրությամբ նախատեսված պահանջներին համապատասխան ապահովել համայնքում հանրային հավաքների մասին իրազեկումների գործընթացները:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝

(ստորագրություն) (անուն, ազգանուն)

ՆԱԽԱԳԻԾ

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
# ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ԱԼԱՎԵՐԴԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

## ՈՐՈՇՈՒՄ

**25 փետրվարի 2025 թվական, N -Ա**

## «ԱՔՈՐՈՒ ՄՇԱԿՈՒՅԹԻ ՏՈՒՆ» ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ԼՈՒԾԱՐՄԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐՆ ԱՎԱՐՏԻՆ ՀԱՍՑՆԵԼՈՒ ՀԱՄԱՐ ՆՈՐ ԼՈՒԾԱՐԱՅԻՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ ՍՏԵՂԾԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Ալավերդի համայնքի ղեկավարի՝ 2023 թվականի հունվարի 12-ի թիվ 16-Ա որոշմամբ ձևավորվել է լուծարային հանձնաժողով՝ «Աքորու մշակույթի տուն» համայնքային ոչ առևտրային կազմակերպության գործունեությունը դադարեցնելու նպատակով:

Նկատի ունենալով, որ հանձնաժողովը չի հասցրել ավարտել իրեն վերապահված աշխատանքները և ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության «Քաղաքացիական օրենսգրքի» 67-րդ, 68-րդ և 69-րդ հոդվածներով, «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի առաջին մասի 15-րդ կետով, «Պետական ոչ առևտրային կազմակերպությունների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 25-րդ հոդվածով՝

համայնքի ավագանին ***որոշում է***.

1. «Աքորու մշակույթի տուն» համայնքային ոչ առևտրային կազմակերպության լուծարման աշխատանքներն ավարտին հասցնելու համար ստեղծել նոր լուծարային հանձնաժողով՝ հետևյալ կազմով.

1.1 Հարություն Ձավարյան - Ալավերդի համայնքի ղեկավարի առաջին տեղակալ, հանձնաժողովի նախագահ

1.2 Դավիթ Սարգսյան - Ալավերդի համայնքի ավագանու անդամ, հանձնաժողովի անդամ

1.3 Արմինե Երիցյան - Ալավերդի համայնքի ավագանու անդամ, հանձնաժողովի անդամ

1.4 Նարինե Թորոսյան - Ալավերդի համայնքի ավագանու անդամ, հանձնաժողովի անդամ

1.5 Հրահատ Սիմոնյան - Աքորի վարչական տարածքի ղեկավար, հանձնաժողովի անդամ

1.6 Լուսինե Սիմոնյան - Ալավերդու համայնքապետարանի աշխատակազմի առաջին կարգի մասնագետ, հանձնաժողովի անդամ

1.7 Հեղինե Ճիճիլյան - Ալավերդու համայնքապետարանի աշխատակազմի քարտուղար, հանձնաժողովի անդամ

1.8 Սամվել Թորոսյան - Ալավերդու համայնքապետարանի աշխատակազմի ֆինանսատնտեսագիտական և գնումների բաժնի պետի պաշտոնակատար

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում հրապարակման հաջորդ օրվանից:

ՆԱԽԱԳԻԾ

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ԱԼԱՎԵՐԴԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

## ՈՐՈՇՈՒՄ

**25 փետրվարի 2025 թվական, N -Ա**

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ԱԼԱՎԵՐԴԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԱՆԱՀԻՆ ԲՆԱԿԱՎԱՅՐՈՒՄ ՆՈՐ ԴՊՐՈՑ ԿԱՌՈՒՑԵԼՈՒՆ ՆԱԽՆԱԿԱՆ ՀԱՄԱՁԱՅՆՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 21-րդ կետով՝

համայնքի ավագանին ***որոշում է.***

1. Տալ նախնական համաձայնություն Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Ալավերդի համայնքի Սանահին բնակավայրում նոր դպրոց կառուցելուն:
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրան պահից: